

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/3

10 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ 23.01.2015 թ-ի թիվ 00005/15-Ս13 գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 29.12.2014 թ-ի թիվ 1001874/1 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ քննչական վարչությունում նյութեր են ստացվել «Վակա Քուլ» ՍՊԸ-ի վերաբերյալ: Նյութերի ուսումնասիրության արդյունքում «Վակա Քուլ» ՍՊԸ-ի կողմից հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 07.08.2013 թ-ին հարուցվել է թիվ 83158813 քրեական գործը, որի շրջանակներում քննության առարկա է դարձել նաև «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի կողմից իրականացված գործունեությունը: Մասնավորապես, ՀՀ ՖՆ քննչական վարչության հատկապես կարևորագույն գործերով քննիչ Տ.Հարությունյանի կողմից 11.10.2013 թ-ին կայացվել է որոշում «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ում թիվ 83158813 քրեական գործի շրջանակներում ստուգում և վերստուգում նշանակելու մասին: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 17.10.2013 թ-ին հրապարակվել է թիվ 1001874/1 հանձնարարագիրը, որի հիման վրա կատարված վերստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 29.12.2014 թ-ի թիվ 1001874/1 ակտը (այսուհետ նաև Ակտ): Բացի այդ, Ակտով արձանագրված խախտումների հիմնավորվածությունը պարզելու նպատակով քննիչի որոշմամբ նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն:

Նշված քրեական գործի շրջանակներում ՀՀ ՖՆ քննչական վարչությունում կատարվում է նախաքննություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83158813 քրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արմենիա Տելեֆոն

Կոմպանի» ՓԲԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ 23.01.2015 թ-ի թիվ 00005/15-Ս13 գրությամբ բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ